Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
Պատասխաններ-11-րդ դասարան

1. Անպարփակ վիշտը հոգու մեջ՝ նա անդադրում դեգերեց օտար ժողովուրդների հայրենիքներում և իմացավ՝ ամենուր՝ աշխարհի բոլոր ծայրերում էլ, վիշտը ***մեկ է,*** սերը՝ մեկ: Վսեմափայլ երգիչը, անբաժան ցուպը ձեռքին, ***մախաղն*** ուսն առած, թափառեց աշխարհեաշխարհ և մի օր՝ կյանքի մայրամուտին, թողած օտար ափերը, իմաստնացած փորձով ու ***աշխարհընկալմամբ*** և հայրենի տունը տեսնելու անձկությամբ **տոգորված,** դարձավ իր հարազատ եզերքը ու անթեղած կարոտը սրտում՝ գտավ հայրական օջախը:

Վաղ առավոտ արշալուսի շքեղահյուս ծիրանու ներքո քաղցրահնչյուն երգի սիրատոչոր մրմունջով ելավ Արագածի զառիվեր լանջը, ընկղմվեց ծաղիկների մեջ՝ զգլխիչ բույրերով ու թույրերով լի, և թրթռուն սրտի ջերմ ***արցունքներով*** ցողվեցին ծաղկաթերթերը: Հետո քայլեց Արաքսի ափով՝ անքթիթ հայացքը խայտացող ***կռհակներին,*** ու երանությամբ ըմբոշխնեց մայր գետի անուշ կարկաչը:

Եվ երբ ահագնատես մահը սարսռազդու ժպիտով նայեց նրան՝ պահանջելով հոգին, երգիչը հանդարտ ու անվրդով ասաց.

- Ապարդյուն է ջանքդ. զուր ես փորձում խլել հոգիս. ես այն աշխարհով մեկ սփռել, բաժանել եմ ամենքին, այնպես որ քեզ տալու ոչինչ չի մնացել:

2. **մեկ է** - բաղադրյալ ստորոգյալ, **մախաղ**- ուղիղ խնդիր,
աշխարհընկալմամբ- միջոցի խնդիր, **տոգորված**- ձևի պարագա,
արցունքներով- ներգործող խնդիր, **կռհակներին**- հանգման խնդիր

3. առած, թողած, տեսնելու, ելավ , տալու

4. <u>աշխարհ</u>+<u>ընկալ</u>(ընդ-կալ)+<u>ում</u>, <u>շք(շուք)</u>+<u>եղ</u>+ա+<u>հյուս</u>, <u>քաղցր</u>+ա+<u>հնչ(հունչ)</u>+<u>յուն</u>, <u>ահ</u>+ա+<u>գն(գին)</u>+ա+<u>տես</u>, <u>սար</u>+<u>սռ(սառ)</u>+<u>ազդ</u>+<u>ու</u>:

5. *սպիեր-սպիներ, ուրեմը-ուրեմն, մի՛ թռչիր-մի՛ թռիր, ուխտադրույժ-ուխտադրուժ, հողարկավորություն-հուղարկավորություն*:

6. Սա նրա **գրածը** չէ:-ստորոգելի, Ցավով նայում էր **ավերված** քաղաքին:-որոշիչ
Ես հավանեցի քո **գրածը**:-ուղիղ խնդիր, **Վաստակածի** կեսը բաժանում էր աղքատներին:-հատկացուցիչ

7. **միահեծան-** բացարձակ իշխանությամբ և իրավունքներով օժտված, ինքնակալ,
ատոք-շատ լիքը, լեցուն, ուռճացած, լեփ-լեցուն,
երեսփոխան-ժողովրդի կողմից ընտրված անձ, որ իբրև անդամ մասնակցում է օրենսդրական մարմնի աշխատանքներին, պատգամավոր,
ապաշավանք- զոջում, ափսոսանք՝ կատարած վատ արարքի համար, ապաշխարանք,
զանգապան-մետաղյա՝ կաշվե զրահ՝ սրունքները պաշտպանելու համար, սռնապան, սրնքակալ:

8. **գողգոթայի ճանապարհ**-չարչարանքների՝ նահատակության ուղի,
առաջին ջութակ-որևէ բնագավառում առաջատար դեր ունեցող անձ,
գորդյան հանգույց- խճճված, կնճռոտ հարց,
երգ երգոց, - լավագույն ստեղծագործություն, գլուխգործոց

Գնահատման չափանիշներ- 11-րդ դասարան

Ամբողջ հարցաշարին տրվում է 50 միավոր, որից՝

1. Բնագրի ճիշտ կետադրության համար տրվում է 6 միավոր:
   Յուրաքանչյուր կետադրական ոչ ճիշտ նշանի համար հանվում է 1 միավոր:
2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 6 միավոր:
3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
4. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
   Եթե արմատը կամ ածանցը ճիշտ ընդգծված չէ, միավոր չի տրվում:
5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
   Եթե նախադասությունը կազմությամբ պարզ չէ, կամ շարահյուսական պաշտոնը սխալ է նշված, ապա միավոր չի տրվում:
7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 5 միավոր:
8. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան՝ 1, ընդհանուր՝ 4 միավոր:
9. Շարադրության համար տրվում է 10 միավոր:

Բոլոր առաջադրանքների ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1 միավոր, կետադրականի համար՝ 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր:

Յուրաքանչյուր առաջադրանքի ավել գրած սխալ պատասխանի համար հանվում է 1-ական միավոր: